

11206



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 17 » 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 226 - 24

Նախաձեռնող՝

«Արկադա Բիզնես Սենթր» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 2 թղմ. 17/14

Գործունեությունը՝

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մ. Մելքոնյան 24
հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի
կառուցում
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 226 - 24
« 17 » հոկտեմբերի 2024թ.

**Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մ. Մելքոնյան 24 հասցեում
բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «Արկադա Բիզնես Սենթր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն, նախագծային
փաստաթուղթ
Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն «Արկադա Բիզնես Սենթր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մ. Մելքոնյան 24 հասցեում նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր (այսուհետ՝ Համալիր):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 կետի՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան համայնքի կողմից տրված 2024թ. մարտի 1-ի N01/50-01-85-24 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի գրանցման վկայականով ամրագրված 0,65 հա մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0282-0315), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը տեղադրված է Երևան քաղաքի արևմտյան մասում, Մալաթիա-Սեբաստիա վարչական տարածքում, Մոնթե Մելքոնյան փողոցի և Ծիծեռնակաբերդի խճուղու միջանկյալ մասում:

Հողամասն ազատ է կառուցապատումից, ծառափային բուսականությունը բացակայում է: Կառուցապատման ենթակա հողատարածքի հարևանությամբ իրականացվում են բնակելի շենքերի կառուցման աշխատանքներ:

Մոտակա հասարակական օբյեկտների հեռավորությունը կազմում է 193-1043 մ, գազալցակայանները գտնվում են 766-894 մ հեռավորության վրա:

Համալիրին մոտեցնող ճանապարհը Մոնթե Մելքոնյան փողոցից ուղղակիաց մոտենում է մասնաշենքերին: Ճանապարհը գոյություն ունեցող է: Մոտեցնող ճանապարհին կից նախատեսվում է եզրաքարերով առանձնացվող մայթ հետիոտն անցանկով:



անցուդարձի համար: Նախատեսվող գործունեության սահմանից դուրս համայնքային հողի վրա նախատեսվում է կառուցել ճանապարհ (միջանկյալ համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ):

Կառուցապատման ենթակա տարածքով անցնում է DN500մմ (st) P=1.2մթն. ջրագիծ: Նախատեսվում է DN500մմ (st) P=1.2մթն. ջրագիծը շրջանցման համար շահագործումից հանել և կառուցել DN500մմ, (st) PN=1,0 ՄՊա խողովակներից L=178.0մ երկարությամբ ջրագիծ:

Համաձայն իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների՝ գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, Հրազդան գետի աջափնյա հրաբխային բարձրավանդակի վրա, նրա արևմտյան կողմում: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 980.0-994.0 մետրի սահմաններում: Գտնվում է ՀՀ կլիմայական շրջանցման չափավոր տաք կլիմայական գոտու մեջ:

Հորատման աշխատանքների ընթացքում՝ մինչև 30 մ խորությունը, գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Համաձայն ֆոնդային նյութերի՝ գրունտային ջրերը գտնվում է 50 մետրից խորը: Տեղամասում լայն տարածում ունեն լիցքային գրունտները, որոնց շերտի հզորությունը տեղամասի տարբեր մասերում տատանվում է 6.0-18.0 մ սահմաններում:

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները բացակայում են: Տարածքը գտնվում է II սեյսմիկ գոտում:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, բնության հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ չկան: Հարակից տարածքում առկա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները գտնվում են 674-970 մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Համալիրի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- ✓ հողամասի ընդհանուր մակերես - 6500,0 մ²,
- ✓ շենքի կառուցապատման մակերես - 2620.88 մ² (40%),
- ✓ կանաչապատման մակերես - 2600 մ² (40%),
- ✓ ընդհանուր շին. մակերես - 48000 մ²,
- ✓ շին. ծավալ - 158.400 մ³,
- ✓ ստորգետնյա շին. մակերես - 14253.12 մ²,
- ✓ վերգետնյա և կիսանկուղային հարկի շին. մակերես - 33746.88 մ²,
- ✓ պահեստային տարածքներ - 245.61 մ²,
- ✓ բնակարանների քանակ - 320 բնակարան,
- ✓ ավտոկայանատեղի - 248 մեքենա:

Տարածքում նախատեսվում է 4 հատ բացօդյա ավտոկայանատեղի, որի մակարեսը կազմում 77 մ², որը ներառված է տարածքի ընդհանուր կանաչապատման մակերեսի մեջ՝ պատվածքը սնամեջ բետոնե սալիկներ կանաչապատումով:

Համալիրը կազմված է 2 իրար զուգահեռ՝ 12 և 8 հարկանի՝ համապատասխանաբար Ա և Բ մասնաշենքերից, որոնց առանցքային չափերն են՝ 71.7 x 17.2 մ: Ա մասնաշենքի առաջին հարկը կիսանկուղային է, 12-ը՝ լիարժեք վերգետնյա հարկեր: Շենքերն ունեն 3 հարկ ստորգետնյա ընդհանուր ավտոկայանատեղի /-4.00 նիշ, - 7.90 նիշ և - 11.80 նիշ:

Նախագծով նախատեսվում է մինչև 7,5 կՎտ հզորության միմյանց կապակցված էլեկտրոմոտորների լիցքավորման համար: Կայանները տեղադրվելու են ստորգետնյա ավտոկայանատեղիում, որոնց տեղադրումը և շահագործումը որևէ ազդեցություն չի զարկում միջավայրի վրա չեն ենթադրում:



Շենքերի տանիքներում նախատեսվել են մանկական և սպորտային խաղադաշտեր, Ա մասնաշենքի վերջին բնակելի հարկում՝ պահեստային տարածքներ:

Ա և Բ շենքերի տանիքները հարթ են, օգտագործվող: Տանիքում իրականացվելու է նաև կանաչապատում: Հարթ տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի խողովակներով միանում են անձրևատար կոյուղու բակային ցանցին, որը դիտահորերի միջոցով միանալու է քաղաքային ցանցին:

Տարածքում նախատեսվում է խաղահրապարակ և զրուցարան:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներից ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվելու են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ, արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում և այլն:

Հրդեհանվտանգության նպատակով շենքերում տեղադրվելու են հակահրդեհային հիդրատներով և օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային (հակաձխային) արտածման համակարգեր: -11,80 նիշում տեղադրվելու է 1 հատ 120,0 տ տարողության ջրի բաք հրդեհաշիջման կարիքների համար: Շենքերն ապահովվելու են էվակուացիոն աստիճանավանդակներով, տեղադրվելու են վերելակներ:

Համալիրը՝ ներառյալ ստորգետնյա ավտոկայանատեղին, ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով (թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն): Ստորգետնյա հարկերն անհրաժեշտության դեպքում կծառայեն որպես ապաստարան:

Համալիրի ջրամատակարարումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված NՎՋ2758/2024 տեխնիկական պայմանի: Ջրահեռացումն իրականացվելու է Մ. Մելքոնյան փողոցով անցնող d=500 մմ կոյուղատար: -11,80 նիշում տեղակայվող ջրի բաքի միջոցով շենքում ապահովվելու է անխափան ջրամատակարարում: Հաշվի առնելով ցանցի ճնշումը և ջրաքանակի ոչ բավարար լինելը՝ ներքին ջրամատակարարման և հրդեհաշիջման աշխատանքների համար իրականացվել է պոմպակայանի նախագծում:

Համաձայն «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ Համալիրի էլեկտրամատակարարումն ապահովելու համար ավտոկայանատեղիում /- 4.00 նիշ/ տեղադրվելու է համապատասխան հզորության չոր եղանակով աշխատող երկտրանսֆորմատորային ենթակայան: Ենթակայանի շահագործումն աղմուկի լրացուցիչ ավելացում չի ենթադրում:

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի՝ գազամատակարարումն իրականացվելու է 1.155 հազ.մ³/ժամ ծավալով, Երևան-4 ԳԲԿ-ն սնող Dպ-500 մմ տրամագծով կողմնատար գազատարից: Ջերմամատակարարումը և սառնամատակարարումն իրականացվելու է շինության տանիքում տեղադրվող կաթսայատնից, որտեղ տեղադրվելու են 8 հատ 125 կՎտ հզորությամբ կաթսաներ և 2 հատ 295 կՎտ հզորությամբ չիլլերներ:

Շինաշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 54 ամիս:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի սահմանակալոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շիննյութերի և բետոնի ընդունման հարթակների ակտորնավորում, գիշերային լուսավորվածության ապահովում: Հիմնական փուլում իրականացվելու է շինարարություն՝ ըստ ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:



Շինարարության ընթացքում որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը, որտեղ պահեստավորվելու են շինանյութերը, կայանվելու է շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն:

Տեխնիկա-տրնասպորտային միջոցներից օգտագործվելու են թրթուրավոր էքսկավատոր, բուլդոզեր, թրթուրավոր կոունկ, ավտոբետոնախառնիչ, ձեռքի գործիքներ ավտոինքնաթափեր և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, ֆիբրոցեմենտ, փայտ, մետաղ, ամրանային ձողեր, երեսպատման սալիկներ, տուֆ, ապակի, ներկ և այլն: Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են, իսկ բաց տարածքներում տեղադրվելու են տակդիրների վրա՝ չգերազանցելով բարձրության նորմերը, սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված սպասարկման կետերում, շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսների վրա: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ:

Բետոնի խառնուրդը մատակարարվելու է բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով

Եղանակային տեղումներից /արհեստական առվակների միջոցով/ և անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն տարածքում նախատեսվող 25 մ³ ծավալով պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

Հողային զանգվածն առաջանալու է մասնաշենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից:

Հողային աշխատանքների ժամանակ հողային հանույթը կազմելու է 91000 մ³, ետ լիցքը՝ 80000 մ³: Ավելցուկային 11000 մ³ վտանգավոր նյութերով չաղտոտված հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Հետլիցքի հողի պահման համար անհրաժեշտ հատվածը վարձակալվելու է հարակից համայնքային հողերից:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է (0.7 տ/տարի) և շինարարական աղբը (120 մ³):

Կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից պայմանագրային հիմունքներով՝ տարածքում բացառելով կենցաղային աղբի կուտակումը և այրումը: Շինաղբը տեղափոխվելու և տեղադրվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման, անիվների լվացման, անհրաժեշտության դեպքում, հրդեհաշիջման համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 16816,4 մ³/շին. ժամ:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոնտակ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ջրատար մեքենաներով, իսկ խմելու որակի ջուրը կտեղափոխվի ջրի տարաներով պայմանագրային հիմունքներով:



Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումն և բարեկարգումն իրականացվելու է Կառավարության 2018 թվականի փետրվարի 2-ի N 108-Ն որոշման համապատասխան:

Համաձայն Երևանի քաղաքապետարան ներկայացված կանաչապատման էքզիզային նախագծի՝ իրականացվելու է 2600 մ² (40 %) մակերեսով կանաչապատում ներբակային գոտում և 550 մ² հարևանությամբ գտնվող համայնքային տարածքում՝ ծառատնկման (տեսակային կազմը և քանակը ներկայացված է Հաշվետվությամբ), ծաղկանոցի (120 մ²) և սիզամարգի 3030 մ² միջոցով: Կանաչապատման նպատակով անհրաժեշտ բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրականացվելու է ոռոգման համակարգի անցկացում՝ ցնցուղային սարքավորումներով, որոնք միմյանց հետ կապվելու են ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով:

Նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելելու, մեղմելու նպատակով մշակվել են միջոցառումներ: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ (մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx)) արտանետումների չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ): Մշտադիտարկումները կատարվելու են երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսվել է 1.119 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Համաձայն Հաշվետվության՝ Համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են երկու հանրային քննարկում: Նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների կատարմանը, ժամանակացույցին, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
2. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն և ներկայացված և հաստատված բարեկարգման, արհեստականացման և կանաչապատման նախագծի:



3. Շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը և ճանապարհների բեռնվածությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
5. Բետոնի տեղափոխումն իրականացնել Հաշվետվությամբ նախատեսված ձևով՝ բացառելով շինհրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
6. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
7. Նախատեսվող գործունեության սահմանից դուրս գտնվող համայնքային հողի վրա ճանապարհի կառուցումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
8. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արկադա Բիզնես Սենթր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մ. Մելքոնյան 24 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Շերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան